

Դարանաղցի ալ իր ժամանակագրու-  
թեան մէջ (էջ 326) կը հաստատէ թէ Հա-  
լէպոյ մէջ հանգանակութիւն կատարուելէն  
յետոյ հաւաքուած գանձը միաբանութեան  
անկենցեան առեալ զնացին, յերուսաղիմս եւ  
հոն ճիստօցին զանկենցեան զպարսն եւ ոչ մնաց  
եւ ոչինչ, մինչեւ ի մի յումարողանս (Խոյն-  
էջ 327):

Լիկացի եւ Դարանաղցի ինչպէս կը  
տեսնուի համաձայն են իրարու, միայն թէ  
Լիկացի կը ճշդէ անոնց թիւը ըսելով որ  
միայն 20 հոգի էին: Ամթեցի Ենկի Խո-  
նայի զլիսա: որու թիւամբ:

Սաւալան (էջ 569) առանց յիշուած թէ  
ինչ աղբիւրէ քաղած է՝ կը յիշէ անոնց  
զլիսա: որոնք ինչ միայն տասը քրոնք են.

1. Խօջա Ջաքարէ Վանեցի
2. Խօջա Սո: քիսա »
3. Խօջա Առաքիչ »
4. Խօջա Շէխիջան Բազէշլի
5. Խօջա Թումաշան Ամթեցի
6. Խօջա Բաղդասար Ուսուսյեցի
7. Խօջա Պետրոս Հալէպէն
8. Խօջա Մ. քառուս »
9. Խօջա Դանտին »
10. Խօջա Թուրաջ Սիւնի:

Ասոնց հետ Գրիգոր Կեսարացիի Երու-  
սաղէմ գտցած ըլլալը երբք հուանական  
չէ, վասնզի ինչպէս Սիմէոն Դպիրի գրա-  
ծէն կը տեսնուի 1610 Յուլիս 18ին գործի  
կը ձեռնարկէ Ենկի Խօջա Ամթեցի, որ կու  
պի Հալէպ, հոն ալ երեք ամիս ժողով ու  
հանգանակութիւն կը կատարուի:

Հաւանական է որ 20 պատուիրակնե-  
րուն գալուստը 1611 գարնան կամ դէպի  
Ջառիկ կատարուած ըլլայ: Արդ, Յակոբ  
քհ. Կեսարացի քանի որ կը հաստատէ թէ  
պարսեալ Ռի (= 1611) քոյին կրկին ճարսն  
ի Բիզանդիա արտուանկան հրահանաւ, նիւ-  
թապէն ժամանակ չի կար Երուսաղէմ եր-  
թալու եւ տնկէ Կ. Պոլլոս գառնալու:

Յետոյ նկատի առնելով Յակոբ քհ.  
Կեսարացիի Կեսարիա գտնուիլը, եւ հոն  
գրելը այդ տողերը կարծես թէ արժու-  
նակա՛ն հրամանով վերստին պատրիարք  
տարուիլը Կեսարիայէն եղած ըլլալու ձեւ  
մը ունի: Հետեւաբար կ'ենթադրեմ թէ  
Գրիգոր Կեսարացի 1610ին Ամթի գումար-  
ուածէն յետոյ հաւանորէն Կեսարիա եկած  
է եւ միայն շատ կարճ միջոց մը հոն մնալէ  
յետոյ դարձեալ Կ. Պոլլոս հրաւիրուած է:

(Շարունակելի) (7) Ա. ԱԼՊՅԱԶԷԱՆ

## Ս. ՅԱԿՈՒԲԻ ՆԵՐՍԷՆ

### ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

Անցեալ Լոկոսմբեր ամսուան ընթացքին,  
Ս. Աթոռոյ Յօրէմ Ժողովը ինն անգամներ  
Նիսա ունեցաւ, երօճ. Գեորգ Առեանը՝ երեք,  
իսկ Ռուսովն. Խորհուրդը՝ երեք անգամ:

● Բշ. 28 Սեպտ. — Խաչվերացի մեռելոցին  
առթիւ, սուրբ պատարագի միջոցին, որ մա-  
տուցուեցաւ ի Ս. Փրիլի, Տ. Միսուան վրդ. քա-  
րոզից ձերանի սգաւարացի իր նոցա միսթարեա-  
լին բնաբանին վրայ: Բացատրեց թէ քրիստո-  
նէական հաւատքը միսթարաւթեան աղբիւր է  
մահէն վշտահար սիրտին համար: Վասնզի ա՛ն է  
որ այս աշխարհի անցաւոր գոյութենէն անդին  
անանց եւ զեքաղանցապէս իրական կեանքի մը  
հաւատքը ընդով կը կազմուի սուրբ տիրու-  
թեանց մէջ ընկնուած հոգին:

● Դշ. 7 Հոկտ. — Կէս օրէ վերջ գումարուե-  
ցաւ Միսր. Ընդ. Ժողովը, որ զըսպիցաւ Տեօբէն  
ժողովոյ 1935-36 տարեշրջանի վարչական եւ եկ-  
ամական Տեղեկագրի ընթացքը մտով:

● Եշ. 8 Հոկտ. — Միսր. Ընդ. Ժողովը դար-  
ձեալ գումարուեցաւ, շարունակեց Տեղեկագրին  
ընթացքը եւ վաւերացուց զայն:

● Ուր. 9 Հոկտ. — Երեկոյին, Միսրանու-  
թիւնը, զլիսաբուրեթեամբ Տ. Մեհարայ Սրբազա-  
նի, Ղպոց Ս. Գեորգ եկեղեցիին մէջ կատարեց  
ժամերգութիւն եւ նախատեսակ Ս. Գեորգի, ըստ  
իբրևական սովորութեան:

● Եր. 10 Հոկտ. — Ս. Գատարագը մատու-  
ցուեցաւ Ղպոց եկեղեցին, ուր քարոզեց Տ.  
Տիրան վրդ. Որ խոստովանեցի յիս առաջի  
մարդկան... բնաբանին վրայ: Բացատրեց թէ  
Գրիստոնէութիւնը բնաշնչելու համար հոգի-  
մէական կայսրութեան վերին ճիգին մէջ, ոքան  
չնի արիւթիւն մը ցոյց տալին սուրբըր խո-  
ստովանելու իրենց հաւատքը եւ արհամարհելու  
աշխարհը եւ մարմինը, եւ իրենց շարժարանքին  
մէջ գտնելու համար հոգեկան անգին միսթա-  
րութիւնը, որուն մասին կը խօսի առաքեալաւ  
այդ է պարտե իրական միսթարութիւնը, զոր  
ստանալ պէտք է շնայն ա՛նչ քրիստոնէայ:

— Երեկոյին Միսրանութիւնը ձերայախոսեց  
Թափօրով հանդիսաւոր մուտք գործեց ի Ս. Յա-  
նութիւն, հանդիսապետութեամբ Լուսաբարա-  
պետ Տ. Մեհարայ Սրբազանի:

● Կիր. 11 Հոկտ. — Վարագայ Ս. Խաչի տօնը  
հանդիսելու պատուեցաւ ի Ս. Յարութիւն: Փրկի-  
չին Ս. Գերեզմանին վրայ պատարագեց Տ. Մկր-  
տիչ Սրբազան, եւ քարոզեց: Բացատրեց տանին  
ձագոսմը. վերջումն Վարագայ իբան պատմա-  
կան յիշատակները. յայտնեց թէ այդ սրբավայ-  
րին մէջ պահուած խաչի մասունքը այն էր՝ զոր  
Գայրանէ կախած էր անոր պարսկացին: Իբրև  
զգրբոյն Յակոբայ զմտածելն տէրունական ա-  
րեամբ ի կենաց փայտէն հասեալը: Յետոյ պար-

զեց առ տեսութիւնը թէ Քրիստոսի չարարանքները իբրնց անձին վրայ իբրպէս հրոշմներ միայն կրնան պատուով և միխթարութեամբ կրել անոր նշանը:

● Բշ. 12 Նոյտ. — Ուռուռնի. Խորհուրդը գումարուեցաւ եւ վերջնական անորոշութիւններ ըրաւ յառջիկայ կիրակի հրատարակել Վերջոյ Թարգմանեաց — Դուրեան Գրական Մրցանակի վարդաւարախոսութեան առթիւ:

— Այսօր, վերջնական վերջուած յայտարարուեցաւ իբր վեց ամիսներէ ի վեր շարունակուած գործադուրը, վաճառատունները բացուեցան, և քաղաքը գտաւ կարծես ինչոյն նախկին կեանքը:

● Դշ. 14 Նոյտ. — Ս. Պատրիարքը Յոպով մեկնեցաւ Տ. Արթուռ Արեղային կետ, երկու օրուան հանգիստի մը համար, եւ վերադարձաւ Երբայթ առաւօտ:

● Ուր. 16 Նոյտ. — Իտալական նոր հիւպատոսը, իր Թարգմանին ընկերակցութեամբ, իր առաջին այցելութիւնը տուաւ Ս. Պատրիարք շօր:

● Եր. 17 Նոյտ. — Ս. Պատրիարք շօր այցելեց անշիլիացի ուսարարան մարզպետ մը, ընկերակցութեամբ Պ. Դաւիթ Յովհաննէսեանի:

— Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ Տ. Կլարիկ Վրդ.ի ողորկի այց տուաւ Ս. Քաղաքիս սօսօմական երէցին, իր պաշտօնի լրամարմնի տարիս:

● Կիր. 18 Նոյտ. — Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ Տ. Արթուռ Արեղայի և Պ. Շահան Էրզրէզեանի, դարձաւ մեկնեցաւ Յոպով, եւ հարգանքով տաղանային վերջնական առթիւ քարոզեց տեղւոյն եկեղեցիին մէջ, ուր աւուր պաշտանի քարոզը խօսեցաւ նախ Տ. Առողջիկ Վրդ.ի երեկոյնի դարձաւ:

Իսկ այտուղ, Մայր Տաճարին մէջ քարոզեց Տ. Սիոն Վրդ., «Փորձեցէք գանձինն ձեր իմէ կայացէ՛ք ինչոյն հաւատա՞ծ ընարանով. բացատրեց թէ մարդուն համար բարոյական քայլութեան գործ է ինքնաքննութիւնը Քրիստոսի դաստիարակ շահանքով: Անոնք որ չեն խոչըր այդպիսի քննութիւնէ մը, կը շահին իրապէս. վասնիկ այդ լոյսով ստացուած անձին գիտակցութիւնն է որ, իր թեթրութիւնները ցուցնելով մարդանձն կատարելագործումի ձամբան կը բանայ իր տեսութեան սուղեւ:

● Բշ. 19 Նոյտ. — Ս. Պատրիարքը, առաջ թարգման Ն. Հայրիկ Վրդ.ի կետ, փոխարքած այցելութեան գնաց Իտալական Հիւպատոսին:

— Ս. Քաղաքիս Անկիլլեան նպար, Գեթ. Տ. Պրատան, օր Աստորալիս պայսած եր վեց ամիսներ առաջ, տեղւոյն Անկիլլեան Եպիսկոպոսութեան հարիւրամեակի հանդիսութեանց մասնակցելու համար, վերադարձած ըլլալով, այցելեց Ս. Պատրիարք շօր, ընկերակցութեամբ Կոնստանդին Տ. Պրիմէնի:

● Գշ. 20 Նոյտ. — Ս. Պատրիարքը փոխարքած այցի գնաց Անկիլլեան նպարին, ընկերակցութեամբ Տ. Կլարիկ Վրդ.ին:

● Դշ. 21 Նոյտ. — Տ. Հայրապետ Վրդ., որ

Ս. Պատրիարքին կետ Կիրակի Ս. Աթոռ էր եկած, վերադարձաւ Յոպով, ընկերակցութեամբ Տ. Սիոն և Տ. Տիրայր Վարդապետաց:

● Եր. 24 Նոյտ. — Ի տօնի Սրբոց Թարգմանեաց, կատարուեցան հանդիսութիւնք Մայր Տաճարի մէջ. Ս. Պատրիարք սեղանին առէն քահանայարար պատարագեց Տ. Մեհարզ Սրբազան Ս. Պատրիարքը զիրքի ընթերցումէն ստղը հակիրճ ուղերձով մը սքիզուցեց Նոյնիոյ Տ. Եղիշէ Ս. Պատրիարքին իշխատելով, օրոյ համար յետ Ս. Պատարագի կատարուեցաւ յատուկ Նոյնիոն հանգստեան պաշտօն: Ապա, նախորդ տարիներու հանգիստական թափօրով, վարաճութիւն և ուսանողութիւն գապիին ի Ս. Փրիկի, ուր դարձաւ կատարուեցաւ պաշտօն հանգստեան՝ Լուսաւորուոյն շիրմին շուրջ:

Այսօր, Տ. Մեհարզ Սրբազան ընդունեց Միաբանութեան շնորհաբարկելը՝ իր ի Ս. Յակոբ Ժառանգաբարութեան ինստիտուտին առթիւ:

● Կիր. 25 Նոյտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, ուր քարոզեց Տ. Ջոտ Վրդ.: Բացարարեան վերընձուցի ենթարկելով անմիտ մեծասան և ալրի կնոջ վերաբերմանքները, եղբակցացը թէ ինչ որ իբր տուրք կամ նաւեր կը տրուի աստուածայնակ նպատակներու իրադրոծման համար, յաներձական շահագործումի յանձնուած դրամագրութի մէջ: Քրիստոսեան քործագրելով այս անտակնուով երկնաւոր շօր Յիսուսով յայտնուած կամքը, գանձեր կը գանձէ երկինք մէջ:

— Կէսօր վերջ վերջ, Պատրիարքարանի պատմական մեծ դահլիճին մէջ, ի ներկայութեան ամբողջ Միաբանութեան եւ աշակերտաց եւ ժողովուրդի հոծ բազմութեան, Ս. Պատրիարք շօր նախագահութեամբ տեղի ունեցաւ Վերջոյ Թարգմանեաց — Դուրեան Գրական Մրցանակի պարգևատրութեան 1935 — 36 շրջանի հանդէսը: Տ. Սկրիտի Սրբազան, իբրեւ Ատենպետ Ուռուռնի, Խորհրդոյ, բացման ընդարձակ և երմտաւորայից հաւ մը կարգով Հայ Բանահաւաքութեան եւ աղքատագրական գրականութեան մասին Ապա Ս. Պատրիարքը կարողաց Մրցանակի տուն Տեղիկաբերը, զոր ինչն էր գրած, եւ որ կրատարարուած է Արթուրի ներկայ թիւին մէջ, ու յետոյ դարձեալ փակման խօսքն ըրաւ: Ժառանգաւորք եւ Ս. Թարգմանեաց վարժարանի ասնունք, առաջերորդութեամբ Ս. Աթոռոյ մասնադէտ երաժշտական, Տ. Պատրիարքի, եւ ընկերակցութեամբ երգիչներ, քառաման երգիցիներով յարկ վեցին, միջ մեծացանչոյ, շեմին զի տասնիս, երգերը և ՏՃԷ կեցոյ՝ աղագրանի մարտիկները, խանդավառելով եւ սքանչացնելով բոլոր ներկաները:

● Դշ. 28 Նոյտ. — Ս. Պատրիարքը Հայրը, ընկերակցութեամբ Տ. Մուշեղ, Տ. Տիրան Վարդապետներու և Տ. Արթուռ Արեղայի մեկնեցաւ դէպի Հայեպոյ յայց գերեզմանի հողերոյ Թարգման Կեհնի. իր դարձին պիտի հոգեմէ նահ Անթիլիասի Դպրեմուսը: